

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Նկարում *Ա* տառով նշված է.

- 1) գետի ակունքը
- 2) ողողատը
- 3) գետաբերանը
- 4) գետի հունը



2

Յուրաքանչյուր ժամային գոտի ընկած է 2 միջօրեականների միջև, որոնք իրարից հեռու են.

- 1) 60°
- 2) 45°
- 3) 15°
- 4) 90°

3

Պրահա (արլ. ե. 14°) և Տոկիո (արլ. ե. 140°) քաղաքների գոտիական ժամանակների տարբերությունը կլինի.

- 1) 2 ժամ
- 2) 4 ժամ
- 3) 6 ժամ
- 4) 8 ժամ

4

Մթնոլորտի ազդեցության հետևանքով առաջանում են.

- 1) տարվա եղանակները
- 2) մակընթացությունը և տեղատվությունը
- 3) գեյզերները
- 4) ծովային հոսանքները

5

Ամառային մուսսոնին հատուկ են.

- 1) ցուրտ եղանակները
- 2) շոգ եղանակները
- 3) չոր եղանակները
- 4) անձրևային եղանակները

6

Օրվա ընթացքում վայրի եղանակի փոփոխություններն ամենից առաջ պայմանավորված են.

- 1) քամու ուղղության և արագության փոփոխությամբ
- 2) օդի խոնավության փոփոխություններով
- 3) հորիզոնի նկատմամբ Արեգակի բարձրության փոփոխությամբ
- 4) մթնոլորտային ճնշման փոփոխություններով

7

Որն է տարածքի տեղումների տարեկան քանակը կախված չէ.

- 1) գերիշխող քամիների ուղղությունից
- 2) օվկիանոսների և ծովերի նկատմամբ վայրի ունեցած հեռավորությունից
- 3) օվկիանոսի ջրիաղիությունից
- 4) ծովային հոսանքների տեսակից

8


Արշավախումբը հս. լ. 6° , արմ. ե. 86° կոորդինատից շարժվեց հարավ՝ օրական անցնելով 33,3 կմ ճանապարհ: Արշավախմբի գտնվելու վայրի աշխարհագրական կոորդինատները 35 օր անց կլինեն.

- 1) հս. լ. 10.5° , արմ. ե. 86°
- 2) հվ. լ. 4.5° , արմ. ե. 86°
- 3) հս. լ. 4.5° , արմ. ե. 86°
- 4) հվ. լ. 10.5° , արմ. ե. 86°

9

Գծագրում ցույց տրված շեղման ուղղությունները ո՞ր կիսագնդին են վերաբերում:


- 1) հյուսիսային
- 2) հարավային
- 3) արևելյան
- 4) արևմտյան



10

Նկարում n ը թվով է նշված ամենացածր մթնոլորտային ճնշումը.

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4



11

«Մայրցամաք — անապատներ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) Եվրասիա — Գոբի և Տակլա Մական
- 2) Աֆրիկա — Կալահարի և Նամիբ
- 3) Հարավային Ամերիկա — Լիբիական և Նուբիական
- 4) Ավստրալիա — Ավազային մեծ անապատ և Վիկտորիա մեծ անապատ

12

Ո՞ր կլիմայական գոտում կլիմայական մարզեր չեն առանձնացվում.

- 1) մերձարևադարձային
- 2) բարեխառն
- 3) արևադարձային
- 4) հասարակածային

13

Բնութագրումով որոշել գետը.

Այս գետը Եվրասիայի արևելյան մասում է և թափվում է Դեղին ծովը: Հայտնի է իր վարարումներով, որոնք կապված են մուսսոնային անձրևների հետ: Ո՞րն է այդ գետը.

- 1) Հուանհե
- 2) Յանցզի
- 3) Մեկոնգ
- 4) Ամուր

14

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Գնդաձևության շնորհիվ նույն պահին Երկրի մակերևույթի տարբեր լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:
- 2) Երկրի ձգողության ուժի հետևանքով ծանր նյութերն իջել են ներքև, թեթևները՝ բարձրացել:
- 3) Երկրի ձգողական մեծ ուժի շնորհիվ օդը, մարմինները չեն հեռանում նրանից:
- 4) Երկրի մագնիսական և աշխարհագրական բևեռները, հետևաբար նաև աշխարհագրական և մագնիսական միջօրեականները համընկնում են:

15

Ո՞ր սահմանումն է սխալ.

- 1) Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ բարձրության կոչվում է վերընթաց գոտիականություն:
- 2) Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ աշխարհագրական լայնության կոչվում է լայնակի կամ հորիզոնական զոնայականություն:
- 3) Մայրցամաքների և օվկիանոսների սահմաններում առանձնացվող, երկրագունդը հասարակածից բևեռներ ուղղությամբ գոտևորող բնատարածքային համալիրները կոչվում են բնական զոնաներ:
- 4) Աշխարհագրական թաղանթի այն մասը, որը հարակից տեղանքներից տարբերվում է իր ինքնատիպ մակերևույթով, կլիմայով, ջրերով, հողաբուսական ծածկույթով, կենդանական աշխարհով, այդ բաղադրիչների կապերով ու փոխազդեցություններով, կոչվում է բնատարածքային համալիր:

16

«Գետ — օվկիանոս» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Նիգեր — Հնդկական
- 2) Կոլումբիա — Հյուսիսային սառուցյալ
- 3) Պարանա — Ատլանտյան
- 4) Մաքենզի — Խաղաղ

17

Ո՞ր թերակղզիներն են մխրձվում Մեքսիկական ծոց.

- 1) Ֆլորիդա և Կալիֆոռնիա
- 2) Յուկատան և Լաբրադոր
- 3) Ֆլորիդա և Յուկատան
- 4) Յուկատան և Կալիֆոռնիա

18


Ո՞ր շարքի գետերն են հոսում արևմուտքից արևելք ուղղությամբ.

- 1) Ինդոս, Մեկոնգ, Տիգրիս
- 2) Դնեպր, Իրավադի, Ենիսեյ
- 3) Դանուբ, Ամուր, Յանցզի
- 4) Օբ, Լենա, Վոլգա

19

Ո՞ր ծոցն է քարտեզում նշված Դ տառով.

- 1) Ֆանդի
- 2) Սուրբ Լավրենտիոսի
- 3) Հուդզոնի
- 4) Մեքսիկական



20

Ո՞ր գետն է քարտեզում նշված Ե տառով.

- 1) Ռիո Գրանդե
- 2) Միսիսիպի
- 3) Կոլորադո
- 4) Կոլումբիա

21

Աշնանային գիշերահավասարի օրը հյուսիսային կիսագնդում.

- 1) գարուն է
- 2) ամառ է
- 3) աշուն է
- 4) ձմեռ է

22

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Սկանդինավյան լեռներն առաջացել են ալպյան լեռնակազմության ժամանակ:
- 2) Վերխոյանսկի և Չերսկու լեռները Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալային գոտում են:
- 3) Կուր-Արաքսյան հարթավայրն առաջացել է պլատֆորմի վրա:
- 4) Դրակոնյան լեռները հին են և քայքայված:

23

Արեգակի ճառագայթների անկման անկյունը Երևանում մարտի 21-ի կեսօրին կազմում է մոտ.

- 1) $26,5^\circ$
- 2) 50°
- 3) $73,5^\circ$
- 4) 90°

24


Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
- 2) Բնակչության կյանքի միջին տևողությունը բարձր է:
- 3) Բնակչության խտությամբ գերազանցում է Եվրոպայի մյուս տարածաշրջաններին:
- 4) Տարաբնակեցման ցանցում գերակշռում են խոշոր գյուղական բնակավայրերը:

25

Դիագրամում տրված է աշխարհի բնակչության բաշխումն՝ ըստ ծովից ունեցած հեռավորության: Ո՞ր հեռավորության գոտուն է համապատասխանում 2 թիվը.

- 1) մինչև 50 կմ
- 2) 50–200 կմ
- 3) 500–1000 կմ
- 4) 1000 կմ–ից ավելի



26

«Ժողովրդագրական պայթյունի» գլխավոր պատճառն է.

- 1) զարգացած երկրներում բնակչության բարձր բնական աճը
- 2) կանանց կրթական մակարդակի բարձրացումը
- 3) զարգացող երկրներում քաղաքաբնակների թվի ավելացումը
- 4) զարգացող երկրներում բնակչության մահացության նվազումը ծնելիության բարձր մակարդակի պահպանման պայմաններում

27

Քաղաքների աճի ու զարգացման գործընթացն՝ ի հաշիվ արվարձանների, կոչվում է.

- 1) ուրբանիզացում
- 2) կեդ ուրբանիզացում
- 3) սուբուրբանիզացում
- 4) տարաբնակեցում

28

Բնութագրումով որոշել պետությունը.

Այս ծովային պետությունն աշխարհի զարգացած և հզորագույն երկրներից է: Ամենաբարձր զագաթը գործող հրաբուխ է: Միազգ պետություն է: Աչքի է ընկնում բնակչության բարձր միջին խտությամբ: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Ռուսաստանը
- 2) Ճապոնիան
- 3) Չինաստանը
- 4) Հնդկաստանը

29

Որքա՞ն կկազմի երկրի բնակչության մահացության ցուցանիշը, եթե ծնելիությունը 24 ‰ է, բնական աճը՝ 18 ‰.

- 1) 9 ‰
- 2) 16 ‰
- 3) 42 ‰
- 4) 6 ‰

30

«Պետություն — պետական կառավարման ձև» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ճապոնիա — բացարձակ միապետություն
- 2) Գերմանիա — նախագահական հանրապետություն
- 3) ԱՄՆ — խորհրդարանական հանրապետություն
- 4) Նիդերլանդներ — սահմանադրական միապետություն

31

Ո՞ր շարքի բոլոր երկրներն ունեն դաշնային պետական կառուցվածք.

- 1) Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Ավստրալիա
- 2) Կանադա, Բրազիլիա, Գերմանիա, Հնդկաստան
- 3) Իրան, Լեհաստան, Արգենտինա, Ֆրանսիա
- 4) Ճապոնիա, Շվեյցարիա, Նիգերիա, Եգիպտոս

32

«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն
- 2) պլաստմասսա — մեքենաշինություն
- 3) կաուչուկ — քիմիական արդյունաբերություն
- 4) պողպատ — մետաղաձուլություն

33

Ո՞ր շարքի երկրներն են առաջատար պողպատի ձուլմամբ.

- 1) Ավստրալիա, Ֆրանսիա, Իտալիա
- 2) Իրան, Ռուսաստան, Թուրքիա
- 3) Չինաստան, Ճապոնիա, Հարավային Կորեա
- 4) ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա

34

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Վառելիքային արդյունաբերությունը զբաղվում է էլեկտրաէներգիայի արտադրությամբ և այն սպառողին մատակարարելով:
- 2) Նավթի համաշխարհային պաշարների շուրջ 9/10-ը կենտրոնացված է զարգացած երկրներում:
- 3) Մակընթացային էլեկտրակայանները շրջակա միջավայրը չեն աղտոտում:
- 4) էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության 50 %-ը բաժին է ընկնում զարգացող երկրներին:

35

Աքվակուլտուրա է կոչվում.

- 1) ձկների և այլ ծովային օրգանիզմների որսը
- 2) ծովային օրգանիզմների բնական վերարտադրությունը
- 3) ծովից հանքային ռեսուրսների արդյունահանումը
- 4) ձկների և ջրային այլ կենդանիների արհեստական բուծումը փակ ջրավազաններում

36

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ԳՏՀ-ի շնորհիվ արտադրությունը տեղաբաշխվում է գիտական և կրթական կենտրոններից բավականին հեռու:
- 2) ԳՏՀ-ի շնորհիվ արտադրության տեղաբաշխման վրա բնական գործոնների ազդեցությունը սկսում է մեծանալ:
- 3) ԳՏՀ-ի ազդեցությամբ միջազգային առևտրի ապրանքային կառուցվածքում նվազել է պատրաստի արտադրանքի բաժինը, ավելացել է հումքի և վառելիքի բաժինը:
- 4) ԳՏՀ-ի բնորոշ գիծն է գիտության սրընթաց զարգացումը, որի արդյունքում գիտությունը վերաճում է անմիջական արտադրողական ուժի:

37

Ներքին ջրային տրանսպորտը զարգացած է.

- 1) Հայաստանում
- 2) Ճապոնիայում
- 3) Գերմանիայում
- 4) Իրանում

38

Բնութագրումով որոշել արդյունաբերության ճյուղը.

Արդյունաբերության այս ճյուղն ունի լայն հումքային բազա. բնական հանքային հումք, արդյունաբերության այլ ճյուղերի թափոններ: Ո՞ր ճյուղն է.

- 1) քիմիական արդյունաբերությունը
- 2) մեքենաշինությունը
- 3) մետաղաձուլությունը
- 4) թեթև արդյունաբերությունը

39

Թուրքիային սահմանակից են.

- 1) Իսրայելը և Իրանը
- 2) Սաուդյան Արաբիան և Վրաստանը
- 3) Սիրիան և Հունաստանը
- 4) Օմանը և Ռուսաստանը

40

Բնութագրումով որոշել պետությունը.

Հյուսիսային Եվրոպայի այս պետությունը աշխարհում առավել խտաբնակներից է: Աչքի է ընկնում ուրբանիզացման բարձր մակարդակով: Մայրաքաղաքը ծովային խոշոր նավահանգիստ է: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Նորվեգիան
- 2) Մեծ Բրիտանիան
- 3) Ֆինլանդիան
- 4) Շվեդիան

41

Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:
- 2) Սև մետաղաձուլությունը տեղաբաշխված է երկրի արևմուտքում:
- 3) Հանքային հումքի բացակայության պատճառով արդյունաբերության կառուցվածքում բացակայում է քիմիական արդյունաբերությունը:
- 4) Թեթև արդյունաբերության առաջատար ճյուղերից է բամբակյա գործվածքների արտադրությունը:

42

ԱՄՆ-ի Կենտրոնական հարթավայրերի հյուսիսում ձևավորվել է.

- 1) «բրնձի գոտին»
- 2) «եգիպտացորենի գոտին»
- 3) «ցորենի գոտին»
- 4) «բամբակենու գոտին»

43

Ո՞ր գետերի միախառնումից է առաջանում Շատ-Էլ-Արաբ գետը.

- 1) Արևմտյան Եփրատ և Արևելյան Եփրատ
- 2) Արաքս և Կուր
- 3) Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս
- 4) Տիգրիս և Եփրատ

44

«Գետ — ակունք» զույգերից ընտրել սխալը.

- 1) Արևմտյան Եփրատ — Ծաղկավետ լեռներ
- 2) Արաքս — Բյուրակն լեռնազանգված
- 3) Արածանի — Ծաղկանց լեռներ
- 4) Տիգրիս — Վասպուրականի լեռներ

45

Հայկական լեռնաշխարհի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Օդի բացարձակ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տատանման լայնություն անցնում է 90°C-ից:
- 2) Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է Ուրմիա լճի ավազանում:
- 3) Տեղումների քանակն ամենաքիչը Արարատյան, Նախիջևանի և Ուրմիայի գոգավորությունների հատակային մասերում է՝ 300 մմ-ից պակաս:
- 4) Միջնաշխարհում տարեկան տեղումների միջին քանակը 1000–1200 մմ է:

46

ՀՀ լեռնագրության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Սևանա լիճը եզրավորված է միայն ծալքաբեկորավոր լեռներով:
- 2) ՀՀ ամենաբարձր ծալքաբեկորավոր լեռնագագաթը Կապուտջուղն է:
- 3) Աշոցքի սարահարթում են Ծղուկ և Մեծ Իշխանասար գագաթները:
- 4) Ուրծի լեռնաշղթայից սկսվում և դեպի արևելք տարածվում են Բարգուշատի և Զանգեզուրի լեռնաշղթաները:

47

Փոքր քիմիայի արտադրատեսակներ են.

- 1) լաքերը և պլաստմասսան
- 2) ացետիլենը և քլորոպրենային կաուչուկը
- 3) ծծմբաթթուն և պղնձարջասպը
- 4) քիմիական ռեակտիվները և վիտամինները

48

«Վարչական շրջան — կենտրոն» գույզերից ընտրել *սխալը*.

- 1) Ասկերան — Ստեփանակերտ
- 2) Հաղրութ — Հաղրութ
- 3) Մարտակերտ — Մարտակերտ
- 4) Շահումյան — Քարվաճառ

49


Տավուշի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.

- 1) Հարուստ է հանքային աղբյուրներով:
- 2) Հարուստ է բենթոնիտային կավերի պաշարներով:
- 3) Մարզի տարածքում կան գորշ ածխի պաշարներ:
- 4) Ընդերքը հարուստ է մետաղային օգտակար հանածոներով:

50

Ո՞ր օվկիանոսային հոսանքն է քարտեզում նշված Ա տառով.

- 1) Գվիանական
- 2) Բրազիլական
- 3) Ֆոլկլենդյան
- 4) Պերուական



51

Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզում նշված Ջ տառով.

- 1) Բոգոտա
- 2) Հավանա
- 3) Ասունսիոն
- 4) Կարակաս

52

Վայրի հացազգիների պահպանության ու վերարտադրության նպատակով կազմակերպված ՀՀ հատուկ պահպանվող տարածքներից է.

- 1) Էրեբունիի արգելոցը
- 2) Դիլիջանի ազգային պարկը
- 3) Շիկահողի արգելոցը
- 4) Խոսրովի արգելոցը

53

Ջրային ռեսուրսներով հարուստ երկրներ են.

- 1) Քուվեյթը և Եգիպտոսը
- 2) ԱՄԷ-ն և Կատարը
- 3) Նորվեգիան և Ֆինլանդիան
- 4) Լիբիան և Սաուդյան Արաբիան

54

Ո՞ր բնական ռեսուրսներով են համեմատաբար աղքատ լեռնային տարածքները.

- 1) ջրաէներգետիկ
- 2) մետաղային
- 3) ռեկրեացիոն
- 4) վառելիքային

55

Բնական ռեսուրսների ընդհանուր քանակի (պաշարների) հարաբերակցությունը դրանց տարեկան օգտագործման քանակին կոչվում է.

- 1) ռեսուրսապահովվածություն
- 2) ռեսուրսի գնահատում
- 3) ռեսուրսախնայողություն
- 4) ռեսուրսի տեղաբաշխում

56

Գրել նավարկելի ջրանցքների համարները.

- | | |
|--------------|--------------|
| 1) Ֆլորիդայի | 5) Քիլի |
| 2) Բերինգի | 6) Ջոնսոն |
| 3) Պանամայի | 7) Սուեզի |
| 4) Կուկի | 8) Թաթարական |

57

Գրել Խաղաղ օվկիանոսում և նրա ծովերում գտնվող կղզիների և կղզեխմբերի համարները.

- | | |
|--------------|---------------|
| 1) Հավայան | 5) Ֆիլիպինյան |
| 2) Ճամայկա | 6) Շախգրերգեն |
| 3) Շրի Լանկա | 7) Թայվան |
| 4) Իսլանդիա | 8) Ֆիջի |

58

Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Խաղաղ օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|----------------------------|----------------------|
| 1) Գվիանական | 5) Գոլֆստրիմ |
| 2) Կուրո Սիո | 6) Արևելաավստրալական |
| 3) Ասեդի հրվանդանի | 7) Ալյասկայի |
| 4) Հյուսիսխաղաղօվկիանոսյան | 8) Գվինեական |

59

Գրել այն կենդանատեսակների համարները, որոնք հիմնականում տարածված են Հյուսիսային Ամերիկայում.

- | | |
|--------------|----------------|
| 1) բիզոն | 5) կարիբու |
| 2) բադակտուց | 6) ցեցե |
| 3) եքիդնա | 7) էմու ջայլամ |
| 4) կոնդոր | 8) կենգուրու |

60

Գրել այն պետությունների համարները, որոնք սահմանակցում են Ֆրանսիային.

- | | |
|-----------------|------------------|
| 1) Պորտուգալիա | 5) Սան Մարինո |
| 2) Դանիա | 6) Լյուքսեմբուրգ |
| 3) Նիդերլանդներ | 7) Լիխտենշտայն |
| 4) Ավստրիա | 8) Բելգիա |

61

Գրել հրաբխային ծագում ունեցող լճերի համարները.

- | | |
|-------------------|------------|
| 1) Քարի | 5) Փարվանա |
| 2) Արմադանի | 6) Պարզ |
| 3) Այդր (Մեծամոր) | 7) Ակնա |
| 4) Սև | 8) Ալ |

62

Տրված պետությունները դասավորել երկաթուղիների երկարության նվազման կարգով.

- 1) Գերմանիա
- 2) ԱՄՆ
- 3) Հնդկաստան
- 4) Ռուսաստան

63

ՀՀ տրված հողային տիպերի համարները դասավորել ըստ հումուսի պարունակության հետևյալ հաջորդականությամբ՝ 4–11 %, 1–2 %, 8–13 %.

- 1) մարգագետնատափաստանային
- 2) լեռնային սևահողեր
- 3) կիսաանապատային գորշ հողեր

64

Ռուսական «Միոնի» գիտակայանը հվ. լ. 66°-ի վրա է: Բնեռախույզները, «Միոնի» գիտակայանից դահուկներով շարժվելով 2,4 կմ/ժ միջին արագությամբ, քանի՞ ժամում կհասնեն Հարավային բևեռ:

(65-66). Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 500 մմ է, իսկ օդի ջերմաստիճանը՝ +28°: Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը +13°C է (հաշվարկը կատարել 6°-ով).

65

Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

66

Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին:

(67-68). Երկրի բնակչության թիվը 1.8 մլն է, բնական աճի գործակիցը՝ 16 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 12 400 մարդ, արտագաղթը՝ 8 520 մարդ.

67

Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

68

Որոշել բնակչության մեխանիկական աճը:

Թուրքիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով:
- 2) Ազգային եկամտում արդյունաբերության բաժինը զգալիորեն գերազանցում է ծառայություններին:
- 3) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ջեկերում:
- 4) Ունի զարգացած թեթև արդյունաբերություն, որի համար հումք է ծառայում սեփական գյուղատնտեսական արտադրանքը:
- 5) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է:
- 6) Բուսաբուծության մեջ մեծ է հացահատիկային և տեխնիկական մշակաբույսերի բաժինը:

ՀՀ էլեկտրաէներգետիկայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Էլեկտրաէներգետիկայի կառուցվածքում ամենամեծը ջրաէլեկտրակայանների բաժինն է:
- 2) Ջերմաէլեկտրակայանները տեղակայված են Հրազդանում, Երևանում և Վանաձորում:
- 3) Մեծամորի աէկը միակ ատոմակայանն է Հարավկովկասյան տարածաշրջանում:
- 4) Հրազդան և Որոտան գետերի վրա կառուցվել է ջրաէլեկտրակայանների կասկադ:
- 5) Գործում են ջրային, ջերմային, ատոմային, ինչպես նաև քամու ուժով աշխատող էլեկտրակայաններ:
- 6) Էլեկտրաէներգետիկան բացառապես կախված է ներմուծվող էներգակիրներից: